բռնեց Նորան եւ տարաւ՝ Նորա որդու եւ Ամբատ որդի Աշոտի՝ Աղուանից իշխանի, եւս Աարոնեասեհ որդի Խաչակի հետ միասին[1]։

Գ. Տաբարի։

Աբու Ջաֆար Մ. ի Ջերիր ատ-Տաբարի ծնած է 224/838 թ. Տաբարիստանի Ամուլ քաղաքում։ Ուսումնասիրական ուղեւորութիւնից յետոյ Եգիպտոսում, Ասորիքում եւ Իրաքում (Բաբելոնում), նա հաստատեցաւ վերջապէս Բաղդադում, ուր նա՝ սկզբում իբրեւ ուսուցիչ Խ-դ-ի-ր-ի եւ Գ-ի-հ-ի՝ ապա իւր սեպհական դպրոցը հիմնեց։ Նորա գրական գործունէութիւնն կը տարածուէր ոչ միայն պատմութեան վերայ, ուր նա առաւելապէս իբրեւ հաւաքող կը հանդիսանայ, այլ արդիւնաբեր էր նաեւ Ղուրանի մեկնութեան եւ իրաւաբանութեան մէջ։ Վախճանեցաւ Բաղդադում 310/923 թ. (Geschichte der arabischen Literatur von Carl Brockelmann, I. Band, S. 142, Weimar 1898).

Հեղինակի բազմահատոր համաշխարհային պատմական երկասիրութիւնն, աշխարհի ստեղծմանից մինչեւ նորա ժամանակը, հիջրայից յետոյ իբրեւ ժամանակագիր դասաւորած, լոյս է տեսել մի շարք յայտնի արաբագէտ գիտնականաց խմբագրութեամբ հետեւեալ տիտղոսի տակ՝ Annales quae scripsit Abu Djafar M. b. Djarir at-Tabari cum aliis ed. de Goeje, 3 series, Lugd. Bat. 1879 – 98.

Հայաստանի մասին առաջ բերած տեղեկութիւնները՝ թէեւ ոչ հարուստ՝ զգալի կերպով կը տարբերին Բելազորիի վկայութիւնից, քաղուած լինելով շատ անգամ բոլորովին տարբեր՝ թէ գրաւոր եւ թէ անգիր՝ աղբիւրներից։

---

1 Հմմտ. Թովմայ Արծրունի, էջ 172–175։